Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԽՕՍ

ԶՈՐ ԿՐՏՍԿԱՆՆԵՑ

ՍԻՄԱԿ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԻ ՏԱՍԵՕԹԵՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍԻ ՄԷՋ

1877 ՄԱՅԻՍ 29

)(1877)(

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ս.Ռ. ՊԱՐՈՆ ՅԱԿՈԲ ՇԱՒՍԸՇ

Քաղցրիկ Բարեկամ

Ահաւասիկ Ձեզ կը յանձնեմ իմ առենախօսութիւնին ձեռագիրը՝ զոր և դուք կը հաճիք յանձնել մամուլի։ Մի անհնարին երջանկութիւն է այդ ինձ, բարեկամ, ձայնս պիտի երթայ Տարօն Շիրակ Վասպուրականու եկեղեցաց ևն. ուստի ամեն օր հազարաւոր խե՛ղճ Հայ-եղբայրներ դէպ պանդխտութիւն կը դիմեն. — ինձ համար — դէպ վերջի՛ն ապերջանկութիւն. ա՛հ ձայնս թերեւս հոն՝ Հայաստանի մէջ՝ մի արձագանք դտնէ մի հայ-սիրտի խոր, թերեւս մի հայ պանդխտութիւնէ հրաժարի. յայնժամ իմ իղձերին մեծագոյնները կատարուած պիտի լինին։

Բարեկամ, այս յոյսը այս երջանիկ ակնկալութիւնը դուք կը նուիրէք ինձ մի վեհանձն քաջալերութիւնի հետ, որ դուցէ արժանի չեմ. ձեռք կը տաք ինձ առաջին անդամ գրական ասպարէզ նետուիլ՝ մի ներելի յանդգնութիւն գործել. Ձեզ հաշո՛ր չնորհակալութիւն։ -Թերեւս լինիմ մի օր՝ ինչ որ սաստիկ մաշած է դիս արդէն։- Կըզդամ. շատ իսկ պիտի նպաստէ իմ առաջդիմութիւնին Ձեր աղնիւ խրախոյը՝ որ փոխարէն պարտէի նուիրել իմ այս ԽՕՍ։ Այլ սակայն, քաղցրիկ

66.99 Ա

Բարեկամ, փափագեցայ առաջին վաստակս անձկակարօտ մայրիս նուիրել. մի քաղցրագոյն պարտ է այս՝ զոր կը կատարեմ։ Նա չա՛տ պիտի ուրախանայ . . . ։

Առ այժմ և Ձեզ կը նուիրեմ իմ երախտապարտ սիրտ բոլոր՝ աղաչելով որ հաճիք ընդունել զայն։

1877 Յունիս 15 Մնամ Ձերդ

Կայաթա ՍԻՍԱԿ

ՆՈՒԷՐ

ԱՌ ԿԱՔՕԳԻՆ ԻՄ ՄԱՅՐ

ՏԻԿԻՆ Կ. Թ. ԳՈՒԲՈՒՄՃԵԱՆ

Ո՛վ մայր

Քեզ կը նուիրեմ իմ այս երկ ԵՐԿ առաջին փոխան կաթիդ քաղցրութենի՝ իւ սընուցիր զիս անհուն գորովով, եւ բաղցրը խրատներիդ՝ որոնցմով զեղուեր իմ սիրտ մատաղ ու ցանկայիր առաջնորդել իմ հոգի մանկիկ դէպ ԲԱՐԻՆ դէպ ԱՍՏՈՒԱԾ՝ զոր դու անչափ կը պաշտես։

Ս.

Խ Օ Ս

Ս. Ր Տ Ս. Ս Ա. Ն Ո Ւ Ա. Ծ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԻ

ՏԱՍ ԵՕԹԵՐՈՐԴ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍԻՆ ՄԷՋ

Ա.

Մեծապատիւ Հանդիսականներ

Անցած տարի մի օր այն ծանր ու տաղուկ օրերէն՝ ոյք պանդուխտ մարդերի կեանքը կը խռովին դառնապէս . . . հոգիս վշտակոծ կը ձանկար թոթափել մարդն ընկերական այս վատթար կացութիւնի հետ կապող ամուր շղթաներ ու վերասլանալ այն զուարթ հօրիզոններուն տակ՝ ուր ամեն բան մարդի երեսին կը ժպտի . ուր չիտիրեն երբէք արտասր հարուած ցաւ հառաչ . . . ուր երկաթէ ձեռներ չիդան ճնշել ՄԱՐԴԸ ու պղտորել անոր կեանքի յստակ խաղաղութիւն . . . :

Վիշտերն են որ մարդը բանաստեղծ կանեն, ու կերազէի այնպիսի աշխարհներ, ոյք վառ երևակայութիւնի առջև միայն կը բացուին անե՛ղը ու ոսկեղօծ, այլ ցուրտ իրականութիւնի առջևէն կը փախչին արագ :

Աստուածային աշխարհներ կը պարզուէին բորբոքած երևակայութիւնիս առաջ . և ոչ մերինին պէս՝ ուր ամեն բան արցունք ունի կամ կը քաղէ . . . ուր ամեն բան անհնարին վիշտեր կաղդէ . ուր, ա՜հ, մէն մի վայրկեան բիւրաւոր ու դառն հոգերով կը գայդաշունել մարդկային սիրտերը, ոյք, աւա՜ղ, կարծես թմրած են ու անզգա՜յ . . . :

Այլ իմ երազած աշխարհների մէջէն ընկերական վիշտերը, տիեզերական կիյէթօն, անհաշտ ատելութիւն, անկուշտ եսականութիւն իսպառ հալածական՝ անձնիւր ոք ինքզինք ընդհանրական խմորին մի մաս կը ճանչնայ . կը հաւատայ թէ առհասարակ մարդկային ազգեր իրարի եղբայր են ու հաւասարամեն ալ կը կրեն միևնոյն զգացումները միևնոյն սիրտը միևնոյն հոգին . . . :

Ա՜հ, Պարոններ, թողէ՛ք որ դեռ երազեմ. շատ քա՜ղցր այս մի ցաւած սիրտի համար . . . հոն մարդկութիւնը կը թօթուէ իւր այժմեան դժբաղդութիւն փտուն կարծիքները . սին եղբայրասիրութեան նոր սիրտ նոր դաղափար կը զգենու, և անյիշատակ դարերէ հետէ զարհուրելի քայլերով յառաջացող բա-

նավար սեռի այն վայրագ Լայբնիցը՝ որ արիւնի անհուն նախճերներով ողողեց ու դեռ կ'ողողէ տիեզերը ու աղէտալից թշուառութիւնի սոսկալի յիմարութիւնի մէջ կը թաղէ. այս ճիւաղը հոն ևեթ կանկ կառնու սարսափած, ետ կը նահանջէ ու կը փութայ ծածկուիլ այն անյատակ քաոսի խոր՝ որը «անցեալ» կ'ասեն . . . . :

Այն աշխարհների մէջ, Պարոններ, մարդկութիւնն ազատ է իւր բանավարութիւնը կաշկանդող կապերէն և միտը՝ մարդի այս ներքին անհունութիւն՝ անծայր ասպարէզներ ունի թևարկել սուղիլ դէպ փիլիսոփայութիւնի խոր դէպ այն բիւրաւոր ու դեռ անծանօթ աքանչելիքներ զորս Իտեայանը ցանած է առատ բնութիւնի ներդաշնակութիւնին մէջ։ Այն աշխարհների մէջ, Պարոններ, ԽԵՂՃԸ կը թագաւորէ, ՊԱՐՏԸ կ'իշխէ ու ԻՐԱՒՈՒՆՔ իւր շքեղ պատուանդանին վերայ կը փառաւորուի. մարդկութիւնը կը ճանչնայ իւր կոչումի բարձրութիւն, ու մի ուղեղ ու ճշմարիտ շաւիղի մէջ ելեքտրական արագութիւնով կառաջանայ դէպ մարդկային կեանքի նշանակետ-դէպ հե՛շտ անդորրութիւն. դէպ անո՛յշ երջանկութիւն . . :

Չի, պարոններ, այս աշխարհների մէջ ոչ ցաւ կայ ոչ սարսափ, ոչ արիւն կայ ոչ կռիւ. մարդերը իրարի անկեղծ ԵՂԲԱՅՐ են . . : Եւ

այս է ԲԱՐԻՆ ՃՇՄԱՐԻՏՆ ու ՎՍԵՄԸ . . :

Բ.

Ահա այս քաղցր երազի հեշտին թևերով տարուբերը՝ կ'ասէի ինքնին թէ մարդերը քանի՞ երջանիկ պիտի լինին եթէ մտնեն այս աշխարհների մէջ կազմելով հոն տիեզերական աղգութիւնը-մարդկութիւնը-թողուլով արդի գծուած ու աւերիչ ամեն կարգաւորութիւններ, որք ամեն օր կը կեղեքեն կը յափշտակեն յատնապէս ամենէն անկապտելի կարծուած իրաւունքներն իսկ. թոթուելով, կ'ասեմ, այն խիստ տխուր պատճառներ՝ որք առողջ դատումը տկարելով կործանեցին ընկերական կեանքի ամեն ներդաշնակութիւն, ամեն բան վեր ու վայր տապալելով. Պարոններ, հաւատացէ՛ք ինձ, ընկերականութիւնը իւր գոյութիւնին սկիզբը արդի խեղճ վիճակը չուներ երբէք, մարդերը իրարի օտար ու թշնամի չէին. չարութիւնը ատելութիւն մախանք ներս մտան տիեզերի խաղաղ դռնակէն՝ երբ մի քանի դժոխային կառավիների մէջ կուռճեր ու կըստուարանար ԻՇԽԵԼԻ ցած փառասիրութիւնը՝ որը կ'ընկերանային անհուն աղէտներ՝ որք ամեն օր մեզ ճնշեն կանճիտէն . . . : Ու կը քալէի հաշմոտն. յանկարծ կանկ առին քայլե-

բոս-գուցէ ակամայ-մի սրբանուէր Ցաճարի ներքնագուռին մէջ. մի չարագուժ ձայն լսողութիւնէս շատ կանուխ սիրտիս աղդեցով կոսթափեցնէր զիս. դամբանական մի տխուր աղոթքի ձայնն էր այն՝ որ կը դայր խըռուվել իմ անոյշ երաղներ . . : Ճակատս պաղ քրտինքով ողողեցաւ . . . մի ցուրտ դադաղ կար առջեւս. ու սարսռացի չի գիտեմ՝ էր . . . :

Աղոթաւոր ու կէս դժդոհ քահանայի ա-ճապարող ձայնն կը հնչէր այդ խորհրդաւոր ու մեծակառոյց կամարի տակ. հոգեոր կը կարդար այս անշուք յուղարկաւորութիւնի վերայ, որ քով մի նիհար մոմէ, չորս տխրագէմ մարդերէ զատ ոչ ոք կար :

Մօտ գնացի երկիւղած ինձ նման մի բանավար արարածի յետին գոյութիւն՝ որ սեւ դագաղով պիտի ուղեւորէր մի քիչ եռք «անդարձ ի հող» :

Խոր պատկառով մերձեցայ այս անշունչ դիակի քով՝ որ դեռ երէկ-ինձ նման կշընչէր կը խօսիր ու կը ղդար, այլ այսօր ոչ եւս է նա, ու վաղը թէ փնտռե՛ս՝ -մի ափ մոխիր դարձած է արդէն . . . . ո՞վ մարդկային կեա՛նք . . . ի՞նչ անցաւ սիրտս-չի գիտեմ զդացի թէ կարտասուեմ . . :

Տեսայ այս հանգուցեալը-որպէս կ'ասենծածկուած հին ու պատռած մի սեւ ծած-

կոյթի ներքեւ՝ այր վերայ Քրիստոս կը նըկարեն իւր կրած խաչին վերայ բեւեռուած. . . Քրիստո՛ս. . . ա՜հ, ի՞նչ խորհրդաւոր պատկեր, ծայրագոյն անձնուէր. որ կը զոհուի կամովին փրկել ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, այր զաւակը լինել հաճեցաւ և ինք: Քրիստո՛ս. Պարոններ, որ տասին դար առաջ մի անշան ժանկիկ էր Պաղեստինի աւազուտ հողերին վրայ, մի մսուրի մէջ ծնած, աղքատիկ ծնողի անշուք զաւակ, այլ սակայն նախասահմանուած էր Սա՝ դալու երկնային ցողով կակղել մարդկային գոսացած սիրտի պինդ կոշկոճները : Սա գթալով բանավար սեռի տխուր վիճակին վերայ՝ կը շարժէ ասատուածային շուրթերն, վսեմ ու ու երկնապարար քարոզներով կը ոքնի վերականգնել զոհուած ու սոսրնացած մարդկութիւնը, բարձրացնել նորա խոնարհած ճակատագիր . . . :

Նորա խօսքերն՝ այր պարզ էին Իրենպէս, ու վսեմ Աստուածի անուանին պէս, ահեղ փոթորիկներով կը գան քանդել ու փշրել անողոք հաճոյքներ մի բարբարոս Ցաւիտենականի՝ այր աղաղակող պատուանդանի ներքեւ կը մեռնին ամեն ճշմարտութիւն. կը ճնշուին ամեն զդացում: Սա կը պարզէ խնամով ու անչափ զգուշութիւնով ՊԱՐՏԻ և ԻՐԱՒՈՒՆՔԻ զուգակշիռը :-կը հեղինակէ Աստարանը՝ մարդկային կեանքի ուղղութիւնին

և երջանկութիւնին յայտարարը՝ դէպ վերջին կատարելութիւն. սիրտ կըտայ տկարին, իւր անձով կը պաշտպանէ զրկուածին իրաւունք ու ժողովուրդին արդար դատ այն անյաղուրդ կեղեքողներուն դէմ՝ ոյք «Վերն դ--» կը կոչուին՝ ու որոնցմէ կը ժայթքին էն սասանիկ ոճիրներն, էն դառնիկ զգացումները, էն սոսկալի քրէականութիւնները, էն պրժգալի սուտերը ու էն զարհուրելի սպանութիւնները նիւթական ու բարոյական . . . Քրիստոս զայս ամեն կը գործէ. կը մաքառի սոսկ շուրթերի ու միտի զօրութիւնով՝ մինչ դիմամարտերն ամեն ոյժնիւթական և զօրութիւն բոլոր իւրեանց վերայ կեդրոնացուցած անհնարին ճիգեր կը գործեն յաղթահարել ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆը, խեղդել ԲՈՂՈՔը, կապել ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆը, խորտակել ՀԶՕՐԱԳՈՑՆ ՄԻՏը. և բաբէ՛, մի վայրկեան յաղթեցին ալ այս չարաշուք հ-ԷՊԷՐը. – հա՞րկ է մարդ ասել – ու անարդական խաչի վերայ բարձրացուցին ժողովրդական դատի այդ անեկիւղ փաստաբանը։ Այլ սակայն նա հրճուելով կընդունի այդ նախատակոծ բարձրութիւն՝ ուսի ներող ու դթալի մի նայուած շրջելով զինք ծաղրող յիմար բազմութիւնի վերայ կը ճչէ հեղիկ, կը դոչէ աղերսալից. «ՄԱՐԴԵ՛Ր, ՍԻՐԵՑԷ՛Ք ԶԻՐԱՐ . . .»։

Ապա կը փակէ շուրթերին հետ աչերն ալ վերջին անգամ յառելով զանոնք կատաղի ժողովուրդին վերայ՝ կըլայ, այլ նաեւ կը հրճուի իւր երկնային խօսերով փրկուած մի ապագայի յուսով. վերաշնուելիք մի նոր տիեզերի ակնկալութիւնով. ու կը վերամբառնայ դէպ երկին այն լուսաւոր ամպերի ապրագ թեւերով՝ ոյց իմաստասիրաբար «փիլիսոփայութիւն» կասեն։

Այն օրէն մի ուժգին յեղաշրջում կը ցնցէ կանգնի մարդկային կառափը ու նորա անհունութիւն վեր ու վայր կը յա՛ղէ որպէս փոթորկն Ովկէանի կոհակներ. շատեր կըզգան հոգիով «սիրեցէ՛ք զիրար» ի գերագոյն կարեւորութիւն. կը ճանչնան ամեն մարդի դէմ գործուած անիրաւութիւնները։ Աղատութիւնի պէտքը ամեն ոք կզգայ իւր հոգիի մէջ։

Ամեն բան փոփոխումի կենթարկուի. անկում կործանում կը հասնին արագ. ՍՈՒՏՆ ու ՎԱՏը իրենց գարաւոր պատուանդանէն կը գահավիժին խայտառակուած. զի շատեր կըզգան բանավարութիւնի յետադիմութիւնը՝ միամիտ ժողովուրդին յիմար թշուառութիւնը կըզգան խիղճի ոգեվարը. ԽԻՂՃԻ՝ որ բարեգոյն գործերի և մարդկային վսեմ անձնանուիրութիւնի աստուածութիւնն է անսահման. և զոր Քրիստոս սոսկ երկու բա-

ռի մէջ ամփոփեց, և զայն իբր օրէն ընծայեց մարդկութիւնին. կը կանգնին յանդուգն մարդասէրներ ժողովուրդի իրաւունքը կուղեն յոֆլոներէն. ժողովրդական անոյշ անմոռաց ՆԱՀԱՏԱԿՆԵՐ կեցնեն ու խիղճ չահատակութիւններ կ'անեն մարդկութիւնին գոնը կոչնոյների դէմ։

Մի լոյս կը փողփողի հորիզոնին վերայ՝ որպէս Խաչեանի մատը բնութիւնի հրաշալիքներին վերայ. ժողովուրդը կըսթափի իւր խոր թմրութիւնէն՝ ուր կը պահէին զինք որպէս «մեռեալ» դագաղի մէջ, կը ճանչնայ կը պահանջէ իւր բռնաբարուած իրաւունքներ. անչափ արիւն կը հոսի... աղատութիւնը դուրս կը թռչի գլորելով իւր ցուրտ չիրիմի կափարիչ։ -Աստուածն իսկ այս մեծ յեղաշրջումէն անմաս չի մնար, նա ալ իւր արդարութիւնի աթոռը կը բարձրանայ կրկին, այն երկնային աթոռը՝ զոր չարեր երկրի մէջէն կը ուզնէին յափշտակել մի սոսկալի մարտ մղելով Աստուածութիւնի դէմ...։

Ամեն բան յեղաշրջումի մէջ է. ահեղ շառաչիւնով կընկնին կը տապալուին ԿԵՂԾԻԲ ՍՏՈՒԹԻՒՆ դարաւոր ՈՃԻՐՆԵՐ. և ՄԻՏՆ էր այս սրբազան մարտի դիւցազնը՝ որ զինք կաշկանդող շղթաները կը թոթափէր. սա մի փառաւոր յաղթանակ տարաւ. — վերածնեցաւ իւր աղատութիւնով։

Դ.

Տեսան զայս ջրերը և դդայնի իւրեանց ամբոխալից պարտութիւն՝ ի զուր ընդ երկար սիրտի միտի ու «ներքին համոզում»ի վերայ դառնատար անոխներ դնելէ յետոյ, չի կարացին դիմադրել արդարութիւնին՝ որ ձեռն իւրեանց վերայ կը ծանրանայր, որ ճնշող զօրութիւնէն ուզեցին խուսափիլ ու հալածել զայն ինչպէս հալածեցին զԲրիստոս. այլ անհնար էր այդ, զի -ո՞վ կարող է դիմակալել ժողովուրդի ձայնին-։

Յայնժամ եկան ծածկուիլ այն նուիրական ծածկոյթին տակ որ «Քրիստոսական» կ'ասեն. կեղծեցին յարմարեցան երեւիլ՝ ինչ որ չեն. և սպրդեցան միամիտ ժողովուրդի խաղաղ սիրտի խոր որպէս օձ թունաւոր որ կը սողոսկի գալարապատոյտ ցողատարաւի մարդերի մէջ։

Սկսան կրկին եղեռն ահարկու. թշուառութիւն աղէտ ու ճնշում ողողել տիեզերը որպէս հեղեղ յորդահոս...։

ՍՈՒՏը և ՍԽԱԼը մի նորագոյն երանգով կը խաբէին. և այս դիմակով գոգցէս մի ամբարիշտ Պէսթրիչի անողոք անձնաւորութիւնը աշխարհ կը դար իր քայլերին տակ կոխելով միտ և աղատութիւն. աւա՛ղ, սադայելը հրեշտակ կը կեղծեր...։

Աստուած նուիրական է. և Նորա անուն-նով կը գործուէր։ Նա էր՝ որ արդարը կը սպանանէր . . . ։

Խեղդուեցաւ Գողգոթայի Նահատակին քարոզած վարդապետութիւն — հաւասարութիւն. չքացաւ Նորա նպատակ — փրկութիւն ժողովուրդի . . . ։ Զարերը կը գործեն կը շանթահարեն ինչ որ ճշմարտութիւն է և իւրեանց հակառակ. կը ճնշեն, մի՛շտ կը ճնշեն, և ո՞վ գիտէ մինչ ե՞րբ պիտի երկարի . . . ա՜հ, չէր այս յուսար Քրիստոս, զի պէտք չէր այսպէս լինէր զի Նա . . . բայց ո՞ւրեր գնացի, Պարոններ, այո չէր և իմ նիւթը, ներեցէ՛ք որ ետ դառնամ։

Ե.

Տեսայ, կ՚ասէի, հանգամանքը այդ խորհրդաւոր ծածկոյթին տակ հանգչած. չորս տխուր մարդեր միայն իւր դադարը կը բոլորէին ու պիտի ուղեկցէին իրեն մինչ գերեզմանին դուռ։ Մօտն էի, ճանչցայ, աւա՜ղ, թէ սա մի բեռնակիր մի պանդուխտ Հայաստանցի էր. մի անօգնական արարած՝ որ երկար տքնութիւններէ վերջ՝ անհնարին աշխատութիւններէ յետոյ՝ երկար տարիներ կարօտով մաշելէ ետք՝ դուցէ ժամանակէն

շատ կանուխ կը զրկուի կեանքէն՝ որ այնչափ քաղցր է թշուառին որչափ փշալից . . . «ափսո՜ս». մրմռացի ինքնին, սիրտս փղձկեցաւ, աչերս արցունքով լեցուեցան . . . ։

Դուրս նետուեցայ եկեղեցիէն՝ որը հաստ պատեր դողցէս սիրտիս վերայ կը ծանրանային. «Ա՜հ, կեա՞նք է այս, պոռացի խըռովուած. ապրի՞լ է այս. մի պատառ չոր հացի համար ոչխարհէ աշխարհ վազել, քաղաքէ քաղաք դիմել, գերիի պէս ծառայել, ստրուկի պէս յոգնիլ, դրաստի պէս աշխատիլ, կարօտով մաշիլ . . .»։

—Ո՛չ երբէք, Պարոններ, ապրիլ չէ այս, կեանք չէ այս։ Տե՛ս սա խեղճը, հեղեղի պէս քրտինք կը թափէ սալայատակներին վերայ. զգեստները պատռտած են. ուշադրութիւնով նայէ՛ երեսը, աչերին մէջ արցունք, սիրտին խոր դառնագին կսկիծներ, հոգիին վերայ հազարաւոր վիշտեր պիտի ապացուցանեն քեզ թէ այս կեանք կարծածդ մի սոսկալի մահ է արդէն՝ զոր կենդանի մարդը օրն հազար անգամ կը ճաշակէ երբ պանդուխտ է. թէ այդ չարաչար աշխատութիւններին փոխան մի կտոր չոր հաց հազիւ կը գտնէ ու զայն ալ երեկոյին աղբիւրի պէս արցունքով կը թրջէ յիշելով իւր հեռաւոր ղաւկներն ու ամուսին, որոնցմէ հեռի է շա՜տ հեռի. ոյց քաղցրիկ յիշատակ կը գայ խռովել իւր

դիշերական քունը ու ցորեկը երեւակայութիւնը դրաւել. չի թողուլ զանի մի վայրիկ հանգիստ, այլ մաշել, մի՛շտ մաշել սա խե՛ղճ արարածին վշտոտ սիրտ . . . :

Ներեցէք, Պարոններ, որ սա սրտառուչ եղելութիւն պատմեմ ձեզ. Մի օր այս պանդուխտ մարդերէն մին՝ մի խաղաղ փողոցի մէջ խաղացող փոքրիկ ու սիրուն մի մանուկի քով կանգնած էր թեւերը կուրծին վերայ խաչաձեւած. դիւրը ծռած ուշադիր կը դիտեր զայն. յանկարծ դոցեց աչերը կարծես թէ այլեւս զանի տեսնել չուզելով՝ որպէս զոհը դահիճին սուր. այսպէս կեցաւ մի վայրկեան. ԱՐՏԱՍՈՒՆ . . . ապա մանուկին մօտեցաւ երկիւղած՝ ինչպէս կը մօտի բարեպաշտը Աստուածի պատկերին. մեղմով դրկեց զանի, համբուրեց, ու հեռացաւ հառաչելով . . . : Ա՜հ, Պարոններ, ի՞նչ կը նշանակէ այս ու ի՞նչ կանցներ այս խեղճ արարածի վշտակոծ սիրտի խորէն. . . :

— Անշուշտ մի տխուր յիշատակեր այն. մի մաշող կարօտի սեւ արտայայտութիւն. մի անհնարին կարօտի, որ այս տեսակ թշուառ արարածների նիւթական ու բարոյական ամեն առողջութիւն ծիւրելով կանուխ՝ չա՛տ կանուխ կը տարագրէ այն նեղ ու յաւիտենական փոսը՝ որը ռամկօրէն «գերեզման» կասեն. իսկ ես – ոչընչութի՛ւն . . :

Ա՜հ, Պարոններ, կեանքը չէ՛ այս՝ որ միլիոնաւոր ցաւերով լի է արդէն. ապրիլ չէ՛ այս՝ կարօտ, և աղքատ վշտահար . . . . . .
. . . . . .
. . . . Երանի նոցա՝ որք ԿԱՊՐԻՆ . . .

Կ'ասէի, դուրս ելայ Եկեղեցիէն. տխուր խորհուրդներ հեղեղի նման կը յորդէին ուղեղիս մէջ. և այսպէս մտածեցի :

Զ.

Պանդխտութիւնն մի երկար ոգեւար է ղգայուն սիրտերի համար. դժնդա՛կ ոգեւար, որ դառնութիւններ գուցէ և զիս մի օր պիտի քշեն այսպէս կանուխ դէպ սեւ շիրիմ . . : Երկար տարեն Հայրենիքի կարօտով հառաչելէ վերջ, պիտի տանիմ ակամայ ջախջախուած դլուխս և յոգնած միտս հանդուցանել գերեզմանական ցուրտ մարմարին տակ, չի տեսնելով վերջին անգամ իմ ծնունդի քաղցրը հողեր, ուր ծնայ ու սնայ և այնքան երկնային օրե՛ր անցուցի . . . . : Այդ վերջին ու սոսկալի վայրկեանին մէջ սիրտս՝ ամբողջ կեանքիս ցաւերի ծանրութիւնին չափ կսկիծներ պիտի զգայ. էն փոքրիկ կարծուած մխիթարութիւններն պիտի փնտռեմ չուրջս, այլ լոկ դատարկութիւն՝ չորս պատեր՝ կամ թէ մի օտարութիւն պիտի դտնեմ. նուա-

ղած աչերս չորս դիս պիտի դարձնեմ մահի անկողինիս մէջ ցաւերով ճնշուած. սարսափով համակուած, պիտի փնտռեմ իմ սիրելիներն. իմ մահը ողբացող արտասուալից աչեր չի պիտի տեսնեմ. ոչ ոք իմ քաղցր սիրելիներէն անկողինիս մօտիկ ծնրադրած դիս պիտի ողբայ . . .

«Եւ մահուանէն ալ կռուէ եղիս բան՝»

«Նոր ինանէը՝ վերջը յաղ մ՚էր վրան . .»

Կ՚ասէ Պ. Դուրեան իւր ոգեվարին մէջ։

Գորովոտ մի աղգականիս սիրտի ուժգին և առողջ բաբախում չի պիտի զգամ իմ խորտակուած սիրտի վերայ. վտիտ ու թոռմած այտերիս վերայ չի պիտի հանդչի գորովագութ մայրիս ջերմ և վերջին համբոյրներ. իւր դառնահոս արցունքներ չի պիտի օծեն դիակս կամ խառնին իմիններիս հետ ոչ ոք յետին պիտի լինին . . . ։

Ի զո՛ւր սառ կորած ձեռներս պիտի պարզեմ չորս բոլորս՝ զանոնք հարազատ եղբայրիս ափերին մէջ դնելի յոյսով. ի զո՛ւր պիտի փնտռեմ խնամոտ մի մայր-քոյրի կուրծ՝ ուր հանդչեցնեմ ճնշուած գլխիկս, չի պիտի գտնեմ զայս ու յուսահատ պիտի ձգեմ զայն արցունքով ու մահի քրտինքով թրջուած բարձիս վերայ. հայրս իւր աղեկէզ հառաչներով չի պիտի գայ վրդովել ոգեվարրս . . . արտասուող մի քոյր չի պիտի ծնրադրէ քովիկս. ոչ ոք պիտի աշխատի խաբել զիս յուսահատութիւնիս մէջ թէ՝ պիտի աղեկնաս . . . ։

Ոչ ոք պիտի գտնուի քովս՝ որ ամփոփէ երկիւղած՝ իմ յետին արցունքներ՝ զորս պիտի թափեմ հեռաւոր մայրիս և սիրելիներիս յիշատակին . . . .

Ոչ ոք պիտի հաւքէ խնամով իմ վերջին հառաչներ՝ ոչ ոք սուրբ իղձեր են միայն և յետին բարեւներ . . . ։ Ի զուր պիտի փնտռեմ այս մխիթարութիւններ՝ ոչ ոք չեն այնչափ՝ որչափ կ՚երեւին, զի կարող են ոգեվարի ցաւեր մեղմել։ Հո՞ն՝ շուրջս, են շատ երկու օտարներ պիտի գտնեմ, օտարներ՝ ոչ մի սակաւ կարեկից դէմքով մի «վա՛խ» միայն ըսելով կը բաւականանան . . . ։

Այս բոլոր տարակայ մխիթարութիւններ դէմս պիտի ելնեն. այն ատեն պիտի զգամ թէ շատ տխուր կը կատարուի իմ վախճան. թէ շատ կանուխ կը մեռնիմ. ու մահէս վերջ ոչ ոք պիտի գայ այցելել իմ հեռաւոր գերեզմանին. ոչ ոք երկու կաթիլ հոծ արցունք պիտի սրսկէ հոն իմ տխուր յիշատակը օծնելով. . . ։

Այն ատեն յուսահատ պիտի գոչեմ աչերս. և ահա մայրիս պատկերն պիտի ներկայի երեւակայութիւնիս առջեւ։ Նիհար է նա ու շա՛տ ծերացած. դողդոջուն են քայ-

լերն կըլայ. և զիս կ'ողբայ . . . կ'ըղդամթէ անոր սիրտ. ո՜ անսահման և աստուածային սիրտ մայրի, իմ հեռաւոր մահով յաւիտենական կսկիծի և արցունքի կը դատապարտեմ. . . իւր գերեզման կը փորեմ իմ մահէն ետք չի թողուլով անոր իրը մխիթարութիւն ոչ իմ յետին մրմունջներ և ոչ սեւ հոդակոյտս . . : Պիտի փափաքի նա գէթ բաց մնացած աչերս գոցելի սիրոփանքին. այլ սակայն այս գործ օտար ու անզգոյշ մատեր պիտի կատարեն և այն՝ գուցէ բաւական բրտութիւնով . . . . այն ատեն, դո՜ւ, մա՜յր իմ անոյշ, մա՜յր իմ քաղցրի՜կ, փափուկ սիրտդ՝ որ կը թախծոտի այժմիկ իմ, անբախտ որդեկիդ, տխուր բաժանումով, ա՜հ, այն ատեն պիտի արիւնի՜ և թափես դառն արցունք, թափես յաւիտեան ի յիշատակ իմ կորսուած գերեզմանին . . . . . .
. . . . . .

Է.

Այսպէս կ'անցնի պանդուխտին կեանք՝ Պարոններ. ցաւերով կսկսի վիշտերով կը վերջանայ, ոյց շատ անգամ չի կարելով դիմանալ՝ կերթան դարման դտնել. ո՞ւր. – դիներտուն. հոս իմացականութիւններին կորսնցնելով վայրկենական մխիթարութիւն կառնուն

օղիի բաժակներէն՝ ոյք թոյնով լի են արդէն. . . ա՜հ, ո՞վ չի գթար այս թշուառ արարածներին վերայ . . : Եւ ո՞վ կը համարձակի կեանք կոչել զայս. ո՞վ կարող է զիս համոզել թէ՝ պանդուխտին անցուցած իւրաքանչիւր օրեր՝ երկար դարերի ծանրութիւն չունին . . . :

Այս կեանք չէ՛, պարո՛ններ, այլ մշտատեւ, համր, անողոք մի մահ է այս. ԱՄԵՆ ՕՐ ՄԵՌՆԻԼ Է . . :

Ը.

Եւ «ի՞նչ է մարդկային սեռի նպատակն՝ եթէ ոչ երջանկութիւն». կ'ասէ մտերիմս՝ Պ. Ե. Վրոյը. այո՛ երջանկութիւն՝ զոր շատեր խաբուսիկ գոյների տակ կերազեն: Երջանկութիւնի գաղտնիքն ընտանեկան յարկերի տակ պահուած է՝ ուր Արարչապետին հրաշակերտ զոյգն կը սրբագործուի և ուր մարդկութիւնն իւր մշտնջենական գոյութիւնին վերայ կ'ապահովի: Երջանիկ է այն մարդ՝ որ իւր ընտանեկան խաղաղ յարկի տակ կը ննջէ կամ կը գործէ. իսկ այն թշուառ է (բառին բոլոր իմաստով՝) որ ընտանիք ունի ու միայն կը մաչի կարօտով. զաւակ ունի այլ նորա անմեղ մանկութիւننին, աճումին այնքան քաղցրութիւնները վայելելէ զրկուած

է, հայրենիք, տուն, տեղ ունի, այլ խաների մէջ կը փտայ . . . : Այս դառնատար մի թշուառութիւն է՝ որ, աւա՜ղ, մեր հային կը վերաբերի : Եւ կասեն՝ թէ Հայն երջանիկ է, հարցնեմ ուրեմն. ի՞նչ ունի որով երջանիկ լինի, թո՛ղ ցուցնեն ինձ :

Մեր հայն հաղիւ թէ կամուսնանայ, հաղիւ երեք ամիս ընտանիքի քով կը կենայ, չի ճաշակած ընտանեկան կեանքի քաղցրութիւնն, ահա կը հագնի իւր սօլեր, դաւազանը ձեռքն է. ո՞ւր կերթայ — Ստամպօլ. կարծես Ստամպօլի սալայատակներին վերայ ոսկի փռած են. կը նեռէ ինքզինք պանդխտութիւնի մէջ, ուստի եթէ անվնաս իսկ պրծնի ութ, ին կամ տաս տարի վերջ կը վերադառնայ հայրենիք, բայց ոչ այնպէս՝ ինչպէս մեկնեցաւ. ճակտին վրայ մեծ մեծ խորշոմներ կան, մազերը խառնուրդ են սև ու ճերմակ. ծերացած է . . . : Ես կը լռեմ երջանկայիշատակ Նալբանտեան շատ իսկ խօսած է արդէն այս տխուր նիւթի վերայ:

Այո թշուառութիւն է : Քանի՞ արդեօք Հայ մարդեր այս թշուառութիւնին մէջ կը ծփան, որպէս մի անզօր փայտի բեկոր մունչող ալիքների վերայ : Եղբը դերեզմա՞ն է :

Քանի՞ արդեօք հաղարաւոր Հայ ընտանիք այս սոսկալի պանդխտութիւնին պատճառով՝ այժմիկ՝ դուցէ այս ժամուս՝ արիւն

և արցունք կըլան՝ յիշելով իւրեանց զաւակ կամ ամուսին :

Ես, Պարո՛ններ, չի կրնալով բացատրել պանդխտութիւնն՝ ԱՆՀՈՒՆ ՅԱՒԵՐ կ'անուանեմ զայն :

Հայրենիքիս մէջ էի ու դեռ տղայ. բայց լա՛ւ կը յիշեմ մի պառաւ կինի խօսք՝ զոր կ'ասէր պանդխտութիւնին համար. «Օ՜հ, Տէր Աստուած, կ'աղաղակէր պառաւն, ՀԻՒՐՈՒԹԵԱՆ խրկելը՝ սեւ հող դնելու չափ ծանր է . . .». ու այս փորձառու կինն ԱՐՏԱՍՈՒԵՑ . . . :

Քանի՞ արդեօք մայրեր երկար ատեն արտասուած են. ո՜ արտօսր մայրի . . . կամ չի կարենալով այս ցաւի ծանրութիւնին տակ՝ ծէ՜բո�ն հայրն ախտերով կը բռնուին ու կանուխ ափ կառնեն սեւ հողին դուռ :

Թ.

Եւ, աւա՜ղ, այս պանդխտութիւնը զարհուրելի քայլեր առած է Հայ տնակներէն ներս :

Դարձնեմք մի անգամ աչերնիս Հայաստանի վերայ. այդ նահատակ երկրի վերայ. այդ ելնեմք մխացող աւերակների շուրջ գիւղերին և աւաններին. թափառիմք միտով մեր հոգիի մէջ քաղցրագոյն յիշատակ-

ներ զարթուցանող ամայի դաշտերին մէջ, ուր կէս թաղուած մի կճեայ սիւնի բեկոր մի մեծ յիշատակարան ներկայէ Հային. ուր երբեմն անձկալի աղատութիւնն կը բողբոջէր անարատ արիւնի կաթիլներով ոռոգուած. ուր, Պարո՞ններ, մէն մի ժայռ, մէն մի ծառ, մէն մի առուակ անցեալին սուրբ յիշատակներն կը պահեն խնամով իւրեանց մէջ, շուքի կամ ծալերի տակ... հոն պիտի տեսնեմք որ կիներն՝ տկար արարածներ՝ արօր կը վարեն, ակօս կը բանան, կը տնկեն ու կը հնձեն. արեւի կիզող ճառագայթներին դէմ կրկնակ պաշտօնով ծանրացած կը դորձեն անդադար, զի այրերնին պանդուխտ են։

Տե՛ս, գիւղէն մի քիչ հեռի, դաշտին մէջ, ճամբային մօտ, մի մայր գերկն առած իւր մատաղ մանկիկ՝ ման կրդայ մտաղբաղ հողմակոծիկ տերեւների շուքին տակ. կուրծին վերայ կը սեղմէ անոյշ մանկիկն՝ իւր սիրտին միակ գոհարը. կը համբուրէ զանի կաթոգին. դէպ ճամբան կը նայի ու Կ'ԱՐՏԱՍՈՒԷ... Է՞Ը. — զի վերջին անդամ այդ մանկիկին հայր ուղեւորեցաւ այդ ճամբով դէպ օտար երկիրներ. մի մանկիկ ունի՝ զոր չէ տեսած. և ո՞վ կարող է դուշակել վերադարձն...։

Կարտասուէ այս թշուառ կինը կրկին համբուրելով իւր խանդակաթ մանկիկ՝ հո-

գիին միակ հրեշտակ, զի մի օր և սա՝ երբ արբուն հասակ մտնէ, պիտի թողու իւր հայրական տնակ, դաշտ ու մաճ. պիտի թողու իւր մայր՝ որ կեանքին կէս կը կազմէ, այդ ճամբան պիտի բռնէ ու պիտի երթայ հայրին պէս պանդուխտ լինիլ. տա՛ս տարի, քսա՛ն տարի օտար աշխարհ թափառել, թողուլով խեղճ մայրին դա՛ռն ցաւեր, հաղա՛ր կսկիծներ, ո՛վ մայր, ո՛վ նահատա՛կ։

Ա՛հ, Պարո՞ններ, արցունքով կ'ասեմ, այս ցաւ, այս կսկիծ, այս անողոք թշուառութիւն մեր Ազգին մէջ ճարակած է սաստիկ և այնպիսի արիւնալիր զոհեր կանէ զոր մենք չենք դիտեր։

Ծ.

Ազգերի դոյութիւնն կազմող դարերն ժողովուրդի անհատականութիւններն են։ Եւ երբ ժողովուրդի աճումն դադրի՝ ազգերըն օր օրի կը նուազին. և կ'ասէի արդէն պանդխտութիւնի մեր մէջ տիրած լինելն և հետևաբար ամուսնութիւնների անարգասիք մնալն երկար տարիներ, մեր ազգի նուազումին քանի՞ տխուր պատճառներ են. այդչափ երկար տարիները, հասակին առոյգութիւնը օտար երկիր փոտեցնելը ամենե-

րի անպտուղ մնան հաշիւ անելմը մի անդամ թէ աղգը որչափ կը հարուածեն։

Պարոններ, ենթադրութիւնով մաթեմատիքական գործողութիւնի ձեռնարկեմք. ես արի այս և կուզեմ ձեզ ներկայել մի ենթադրական հաշիւ, միայն Պոլիսի մէջ եղողները հաշուենք. (ենթադրութիւնով)

Վան և իւր շրջականերէն	20,000	մարդ
Մուշ » » »	12,000	»
Սեբաստիա »	10,000	»
Բալու, Բղի, Ակն, Արաբկեր	10,000	»
Միւս քաղաքներէն	20,000	»
Գումար	72,000	
Հանենք այս գումարէն ենթադրութիւննիս իբր սխալ	22,000	
Կը մնայ	50,000	

Ցիսո՛ւն հազա՛ր մարդ միայն Պոլիսի մէջ կը թափառին պանդուխտ ութ, տաս, քսան տարիներ. այք հատնում չունին, ժամանակը միշտ տարիներ կը հիւսէ։ Այս դժնդակ երկարութիւնի մէջ Աղգն արիւնի մէջ կը լողայ. զի Հայաստանի մէջ սա բարի աւանդութիւն կայ՝ զոր հաւատարմաբար զաւկէ զաւակ կը կտակեն, նախ կ'ամուսնացնեն և ապա կը թողուն պանդխտել, որպէս զի ո՛ւր ալ երթայ՝ սիրտով միշտ հայրենիքին հետ

կապուած լինի. օրհնա՛ծ սովորութիւն։ Ա՛րդ, ենթադրենք թէ այս 50,000ին 3/5 ը միայն ամուսնացած լինին ու 5 տարի միայն պանդուխտ մնան. Աղգը այդ 5 տարիի մէջ 3/5ը ամուսնացողներէն՝ որ է 30,000 մարդ, սաչափ ելաս կ'անէ՝ միջին հաշիւով 5 տարին 1 զաւակ՝ 30,000 մարդէն՝ 30,000 զաւակ, իսկ կէս դարի մէջ 300,000 մարդ կը կորսնցէ Աղգը միմիայն Պոլիս եկող պանդուխտներէն։ (Միմիայն 5 տարի կենալ հաշուեցինք, մինչդեռ մեր պանդուխտներին էն քիչն 8-9 տարիէ)։ Հապա ո՞ւր թողումք Զմիւռին, Հալէպ, Դամասկոս, Կիլիկիա, Հարաւ և Հիւսիս, հապա ո՞ւր թողունք Հայաստանի միւս գաւառներն, եթէ ասենք բոլորն հաշուեմք, պիտի սարսափիմք տեսնելով որ մենք մեր այս պանդխտութիւնով այնպիսի արիւնալիր կոտորածներ կ'անեմք, զոր չը կարողացան երբէք՝ ոչ Լէնկ-թիմուրի դաղանային հրամանն, ոչ Արաբացիին արիւնոտ արշաւումներըն, ոչ Թաթարին անողոք սուրն, ոչ Պարսկին դարաւոր պատերազմներն։ Այո՛, պիտի սարսափիմք տեսնելով որ մենք ամեն օր Աղգը կոսպաննեմք և անդիտաբար ձեռներնիս նորա արիւնին մէջ կը թաթխեմք . . . : Մենք զմեզ կը մեռցնեմք բարոյապէս . . . . . :

Ա՜հ, աս ի՞նչ վիճակ, ի՞նչ թշուառութիւն՝ ում դատապարտուած են իմ Հայ եղբայրներ։

Ո՞վ չի դիմար այս վիճակին վերայ. ո՞վ սիրտ չունի . . . . :

ԺԱ.

Անցած տարի առաջին անգամ պատիւ ունեցայ հոս բեմ ելնել. շատեր կը յիշեն այն տեսնի նիւթս : -ՊԱՆԴՈՒԽՏ ԲԵՌՆԱԿԻՐ-ոյը վերայ այնչափ կծու քննադատութիւններ կուսակցին. շատ պարոններ անվայել կը համարէին զայն. և ոմանք ալ՝ ուրախութիւնը խանգարել է կ'ասէին, մին «իմաստակութիւն» կը կոչէր իմ տեսնախօսութիւն. այլ ոմն «տղայական» կ'անուանէր զայն : Ա.յն ատեն լռեցի և ահա կը հարցնեմ. ի՞նչ կուզէին որ խօսէի, չորս սովորական խօսքե՞ր, որ ժողովուրդի գլուխը ուռեցուցած են արդէն. և ողջամիտ աղգայիններուն առջեւ արժէք չունին բնաւ : Իրենց պէս խաբէի պարզամիտ ժողովուրդը՝ թէ, Հայ, մի ուղիղ ընթացով կ'առաջանաս հոն՝ ուր աղգեր իրենց երջանկութիւնն կը դտնեն. մինչ մեր Հայն դէպ իւր կորուստի անդունդ կը վազէ. ոչ գրականութիւն ունի, ոչ քաղաքակրթութիւն և, աւա՜ղ. ոչ ալ դիտակցութիւն իւր բռնած ընթացին . . . : Սին դուշակութիւնե՞ր ունէի թէ, Հա՛յ, փառաւոր պիտի լինի քո ապագայն, մինչ նա փառաւոր մի ա-

պագայ ծնանող կարգաւորուած ներկայ չ'ունի : Ասէի՞ մեր Հային՝ թէ դու բաւական առաջացած ես գեղարուեստի, վաճառականութիւնի և երկրագործութիւնի մէջ. մինչ նա իւր ամէն պիտոյքներ օտարէն կը դնէ՝ իւր հանճարն ու արդաւանդ հողեր թողլով ամայի . . : Կուզէի՞ն այդ պարոնները որ մի քանի փաղաքուշ խօսքերով շողոքորթեմ հային՝ իմ թշնամւոյ՝ ցաւալի կուրութիւն : Ա՜հ, կուզէի՞ն այդ պարոններն որ ՀՀՀ կարդամ մեր ժողովուրդի աղետալի թմրութիւնին վերայ : Մեր ԺՈՂՈՎՈՒՐԴԸ միամիտ է, խոշոր բառերէ կը շլանայ, շողոքորթութիւնը կը սիրէ. ու մի հոյակապ անցեալ յաւէտ սիրահար՝ չի շարժէ իւր ուշ դէպ ներկայ. որով սովորութիւն եղած է մի շատ տեսնաբաններուն բեմին վերայ Վարդանի տեսարան ներկայացնել : Վարդան մի անգամ նահատակ եղաւ և անմահացաւ. իսկ մեր պանդուխտ ժողովուրդն օրն տաս անգամ մարտիրոս կը լինի զգացումով, հոգիով : Ի՞նչ օգուտ մեզ անցածէն՝ որ այնչափ շքեղ էր. և ի՞նչ յարաբերութիւն ներկային հետ՝ որ այսչափ տխուր է . . . Անցածն անցաւ, Պարոններ, մենք դառնամք ներկային. հանդարտ թողունք անցեալն իւր պատուանդանի վերայ. դոցենք յիշատակարանի արտօսրալից էջերը. թողունք մեր դիւցազներին խաղաղ

աճիւններ անդորրանալ Իւրեանց շիրիմի խոր. չի խռովենք նոցա քուն։ Պարոն ատենախօսներ. ժամանակը կանցնի, իւր քայլերը հովի պէս արագ են. եւ պահանջումներն ԽԻՍՏ և ԱՆՆԵՐՈՂ. այլ մեր ժողովուրդն միշտ կը սիրէ մնալ անցեալի մոխիրներին վերայ, «ոյց խոր այնչափ փառքեր ունի թաղուած». այլ այս փառքերն, Պ. ատենաբաններ, ներկայի հետ բնա՛ւ յարակցութիւն չունին։

Շարժել պէտք է այս ժողովուրդն, որը պէտքեր միլիոնաւոր են, և քարոզել իւր թերութիւններն։

Ո՛հ, հարկէ՞ յիշել, կան շատ ատենաբաններ որք ԱԹԵՆԱՔՕՆԷՅԻ սին փառասիրութիւնով և ժողովրդէն երկու ԺՈՂՈՎՐՈՒԴԻՆ յաւիշատակելի յիմար բաղձանքով բեմ կելնեն և կը խօսին անանկ ՆԷՐԲԷՔ վրայ՝ որք բոլորովին անօգուտ են։ Այս Պարոնների խօսքի բնաբան և վերջաբան կը կազմեն միշտ անցածի յիշատակութիւններն. ասոնք օգուտ չունին։ Ես իւր իւրեանց ամենայեսին ընկեր՝ կ'ասեմ աղաչելով. Պ. ատենաբաններ, Ազգը թշուառ է ներքին ու արտաքին վիճակով. ազգութիւնն իւր բարոյականի ամենէն կենսական տարրերն կ'սպառէ. ասո՞նք պէտք է քարոզել ժողովուրդին, իւր հազար թերութիւններն և նոցա միջոց ու դարման։ Շարժել պէտք է այս Ազգը, Պարոններ, և այս ըստ

կարի գործել՝ մեր պարտ է։ Պէտք է, կ'ասեմ, խօսիլ ժողովուրդին՝ որչափ կարելի է ազգու և պերճախօս լեզուով –հոգիով– ինչ որ ճշմարտութիւն է, այսինքն թէ, դո՛ւ, Հայ ժողովուրդ. շատ հեռի մնացած ես այն ճամբայէն՝ որ Արեւմուտքի ազգերն տարաւ բընակեցուց երջանկութիւնի յարկին տակ։ Մի՛ քներ, բա՛ց աչերդ. տես անոնք վարժարաններ կը հիմնեն. իսկ դու ունեցածներդ՝ որք ԽԵՂՃ — ԽԷԼԵԿ բաներ են՝ գոցել կը ճգնիս անդիտաբար։ Վարժարանէն լոյս կը բղխի...։

Պ. ատենաբաններ, այս է ահա ձեր սրբազան պարտ. Ազգը թմրած է ճգնել սթափիլ զանի, մի առաջադիմական կայծ դնել նորա սիրտի մէջ. մի լուսաւոր կանթեղ կախել նորա խաւար գաղափարի մէջ. մի վեհ եւ հայրենասիրական զգացումներշնչել նորա հոգիի մէջ. այս պիտի շարժէ և կատարեալ գործէ մեր Ազգն եւ այս պիտի լինի ձեզ փառք։

Պ. ատենաբաններ, այս Ազգն՝ որը զաւակներն եմք ամենքս, խիստ ետ մնացած է. պէտք է մի զօրաւոր մղում տալ՝ որ զանի առաջ վարել արագութիւնով դէպ մի մեծ յեղաշրջումներքին եւ արտաքին վիճակի։

Յեղաշրջումն՝ լոյս կը ճառագայթէ։ Այս ազգը, Պ. ատենաբաններ, դեռ չէ զգացած իդեական սեռի դաստիարակութիւնին

անհրաժեշտ կարեւորութիւն, պէտք է անդադար քարոզել զայս՝ առանց որոյ մի երաշ կը դառնայ կատարեալ առաջդիմութիւնի համար մեր իշձեր և չան։ Որբանէն պէտք է դաստիարակուի մանկիկը. մասալ ի տեղ տիեզերական ու ազգային պատմութիւն թող ունի, և պիտի տեսնէք թէ քանի՞ ճըշմարիտ հայրենասէրներ պիտի ունենամք, և ոյք ինչե՛ր պիտի գործեն։

Մայրը մանուկին համար ամեն բանէ. Պարոններ. աղէտ, թշուառութեան, կամ բարձրութիւն։ Գեղեցիկ սեռի հանճարը բարձր է և վախուկ. «դիտութիւնների քանի՞ քանի հրաշալ գագաթներ տիկինների վախուկ հանճարին առջեւ խոնարհած են». կը վկայէ Ս. Տրպէյ։

Կիներն աւելի կանուխ կրնան լուսաւորել զմեզ։

Պ. ատենաբաններ, դարձուցէք աչերնիդ չորս կողմ, մի ակնարկ ձգեցէք դպրոցների վերայ, քանի՞ խեղճ կացութիւն ունին. քանի՞ թանկագին տարիներ ի զո՛ւր կը վատնեն հոն մանուկներ և առանց մի բան սովրած լինելի դուրս կելնեն . . .։

Ա՛հ, կը զարմանամ, Պ. ատենաբաններ, ի՞նչպէս կը ներէ ձեզ ձեր խիղճ, մոռնալ, կամ ասեմ, ծածկել ժողովուրդի թերութիւններն և անօգուտ նիւթերի վրայ խօսիլ։

Ի՞նչ կը կարծէք բեմը, խաղալի՞կ . . .։

Բեմն հաղարաւոր ներգործութիւններ առաւ անցած դարերի մէջ շատ ժողովուրդների բարքին ու վիճակին վերայ։ Բեմը, Պարոններ, մի ամենակարեւոր կրթարան է ժողովուրդին համար։

Բեմը Պարոններ Եսգինէներ ունեցաւ։

Բեմը Միւռապոի և Ռօպէսբիէռի պատուանդան եղաւ։

Բեմը մի ահաւոր հրաբուխ է, ոյր բռընկող նիւթերն Աստուած կը մատակարարէ . .։

Պ. Ատենաբաններ, և դուք այդ բեմի վերայէն շարժեցէ՛ք ժողովուրդը դէպ առաջ դէպ գիտակցութիւն մարդկային կեանքի։

Քարոզեցէ՛ք անոր ինչ որ ՃՇՄԱՐԻՏ է և ՕԳՏԱԿԱՐ։

Քարոզեցէ՛ք մեր ժողովուրդին դպրոցների հարկաւորութիւնը։

Մի վառարան կայ. հոն պէտք է ամեն մարդ մի ածուխի կտոր, մի փայտի բեկոր, կամ՝ թէ չունի, մի յարդի չիւղ նետէ հոն. մի այլ մարդ մի կրակ դնէ այդ դիւրավառ նիւթերի վերայ. և այլ ոմն իւր չունչով արծարծէ. պիտի հրդեհի մի հարուստ բոց և ծաւալի, նորա սև ու ոլորուն մուխին հետ պիտի ցնդի անհետանայ՝ ինչ որ հին է ու վնասաւոր . . .։

Դպրոցն է այս ՎԱՌԱՐԱՆ, ոյր սեմէն

ներս և եթ կընայ վերածնիլ ՄԱՐԴԸ։

Պ. ատենաբաններ, այս վարժարան քարոզեցէք ժողովուրդին. կրկնեցէ՛ք իրեն, պօռացէ՛ք ուժգին՝ եթէ չի լսել ձևացնէ, թէ անձնիւր ՄԱՐԴի պարտն է իւր յետին լուման զոհել և այդ դպրոցի անկիւնին մի քար պատրաստել....։

Մեր Ազգը թշուառ է և ապերջանիկ, թողունք անցածը, նա անցած է արդէն. դառնամք Ներկային՝ որ նշանաբան կը կազմեն ՎԱՐԺԱՐԱՆ, ՄԱՄՈՒԼ և ԳՐԻՉ. որոնցմով և եթ կարելի է յեղափոխուի Հայն. թողուէ իւր այս աղէտալի կացութիւն. թողու, հեռանայ հինէն. նորին և ժամանակին յարմարի։

Հինը չա՛տ հինցած է արդէն...։

Ահա այս և ասոնց նման մի այլ շատ նիւթերի ու հարկաւորութիւնների քարոզն է Ձեր սրբազան ՊԱՐՏ։

Քարոզեցէ՛ք, անդադար քարոզեցէ՛ք ուր որ ալ լինիք, փողոցին մէջ, հրապարակին վրայ. քարոզել, անդադար քարոզել փրկութիւն մեր Հայ ժողովուրդին։ Պ. ատենաբաններ, յանուն ազգային այս լինի ձեզ իմ աղերս։

Թողէք ջնջին նիւթերն։

Այս ժողովուրդի ներքին յեղափոխել ճգնեցէք բեմի վերայէն, այս է ձեր կոչում,

Այս տարի ևս պատիւ ունեցայ բեմ ելնել, ընտրեցի ինձ նիւթ ինչ որ տխուր է, այլ սակայն պէտք և ճշմարիտ, պանդուխտների վիճակն։

Սա երկար ատեն գրաւեց իմ ուշ, և կը խորհէի թէ ինչ անել պէտք է՝ որպէս զի պանդուխտներին թիւը նուազի, որպէս զի նոցա տխուր վիճակ բարւոքի և սա շատ ցաւած սիրտերի դառնութիւններն ամոքին և Ազգը չի կորուսէ։ Պարո՛ններ, պանդխտութիւնն ժանտախտի պէս կը ճարակի՝ ու հաղարաւոր արիւններ կանէ ամեն օր։

Այս զարհուրելի ախտի բարձումին ես ուրիշ միջոց չի գտայ. — քանի որ Ազգն իւր արդի վիճակն ունի. — բայց եթէ՝ — ԼՈ՛ՑՍ։

Լո՛յս, որով կարենայ ճանչնալ սա թշուառ Հայաստանցին թէ յիմար արբեցութիւններն զինքն իւր վիճակէն չեն փրկեր, սիրելիների գերկ չեն նետեր, այլ գերեզմա՛նին։

Գիտնայ. կ՚ասեմ, սա խեղճ պանդուխտ թէ երջանկութիւնն ոսկիով չի գար բնակիլ մեր տնակների մէջ. բայց եթէ ընտանեկան խաղաղութիւնով և անխոնջ աշխատութիւնով։

Գիտնայ, կ՚ասեմ, սա տառապող Հայի տղան՝ թէ այս կեանքն երկրորդ անգամ ի-

բեն չի տրուիր. զայն աղէկ գործածել պէտք է. թէ իւր երկիրի հողերն արդաւանդ են յոյժ. թէ օտարութիւնով, վիշտով մաշելէն աւելի քաղցր և գերազանց է մի սակաւ նեղուիլ հայրենի տնակին մէջ՝ ընտանիքի իրենամով պաշտուած . . . :

Ա՛յո՛, լո՛յս, որով կարենայ գիտնալ մեր Հայն թէ աշխատութիւնն ամեն յոյս կը պսակէ. թէ իւր երջանկութիւնն պիտի գայ զինք փնտռելու՝ եթէ աշխատի, թէ պանդխտանալով երջանկութիւն փնտռելն՝ աւելի կորսնցնելի կը նպաստէ. թէ մեծամեծ գործերի յաջողութիւնն վերացականութիւն չէ:

Թէ միութիւնն ճշմարիտ հրաշներ կը գործէ, թէ շահարար միութիւններ խիստ դիւրութիւնով կրնան առաջացնել Հայաստանի մէջ գործարաններ և շերամ. առաջ վարել երկրագործութիւնն դէպ կատարելութիւն նոր դրութիւններով, նոր մեթոտներով. Հայաստանի ապառաժն անդամ իւրեանց քիրտ պիտի արդասաւորէ հաղա՛ր ու բի՛ւր. որով վաճառականութիւնն պիտի սկսի ծաղկիլ:

Ա՛յո՛, լո՛յս, որով կարենայ մեր Հայն տեսնել զաշխարհ. տեսնել միութիւնների գերագոյն հեղինակութիւն, անհուն զօրութիւն, որ առջեւ կը փչրին ամեն բռնական միջոց, որպէս փրփրոտ կոհակ ժայռի ստորոտ:

Ա՛յո՛, լո՛յս, որով կարենայ զգալ մեր

Հայն թէ՝ ա՛լ բաւական է որչափ երջանկացա՛ն այս պանդխտութիւնէն՝ յորում Եգիպտական ծառայութիւններով կը փտտին կը մաշին. կազմեն շահարար միութիւններ, որոց ուժովն և արդիւնքով վերածուին մի երջանիկ վիճակի այսչափ նեղութիւններէ և տառապումներէ վերջ:

Ա՛յո՛, Պարոններ, լո՛յս պէտք է այս անօգնական արարածներին՝ որոց կեանքն անգիտակցութիւնի մէջ կը թաւալի. ի՞նչ օգուտ մեզ միտն՝ այս գերագոյն կարողութիւն՝ որով հաճած է բնութիւն օժտել միայն բանավոր սեռը, քանի որ անգործածութիւնի մէջ պիտի մնայ, քանի որ մեր տգիտութիւնին, կանխակալ կարծիքներին գերի պիտի լինի. քանի որ թմրած՝ ձգտում չի պիտի զգայ ու գործէ դէպ ԲՆՈՒԹԻՒՆին խոր՝ ուր Աստուած շատ գաղտնիք պահած է դեռ: Անգիտակցութիւնի մէջ եղած կեանքն՝ անանձնութիւնին շատ մօտ է . . . Հայն զայս չի գիտեր . . . :

Լո՛յս պէտք է այս միտին և թանձր մշուշով պատուած մեր գաղափարների ամենէ յետին ու մամռոտ խաւերին վերայ՝ որպէս ցօղ կենդանարար. և պիտի բարձրանայ իւր արդի ստորնութիւնէն մեր կոչում:

Լո՛յս. ահա այս խորհրդաւոր բառի իրագործութիւն և եթէ կարող է զմեզ վերածել

ի փրկութիւն՝ փութացնելով արագ դէպ գիտութիւն, դէպ անմոլոր մարդկութիւն՝ ուր երջանկութիւն կը թագաւորէ։

Ժ.

Այլ սակայն ո՞վ պիտի ճառագայթէ այս անհուն լոյս մեր մթնիկ հորիզոնի վերայ. ո՛վ պիտի ցողէ և ոռոգէ այս երկնային ցողով մեր նախապաշարում ի մէջ գօսացած դաղափարները. ո՞վ պիտի ուղղէ մեր յիմար կարծիքներ՝ որք մեզ հետ արգանդէն կըսկսին, դերեզման կը վերջանան, ո՛վ պիտի կործանէ զասունք։

— Թատրո՞ն. որ ժողովուրդի զգացումներն կը կրթէ և կը դաստիարակէ. անդունդ կը նետէ յոռին ու վատը՝ բարձրացնելով բարին. Թատրո՞նը. ուստի անչափ յեղաշրջումներ կը թռչին ու թռան Արեւմուտքի մէջ, և մեծամեծ ներգործութիւններ կատարեցին բարքերի և միտերի վերայ... բայց մենք թատրոն չունինք, թատերգակ չունինք. ողբերգակ չունինք, և չի՛ պիտի ունենանք՝ քանի որ չեմք ճանչնար նոցա յարգ. քանի որ չենք քաջալերեր զանոնք. «քաջալերութիւնք յառաջադիմութեան երկու ոտքերն են». կասէ դաստիարակս՝ Պ. Մ. Ս. Հայկունի՝ իւր երկար փորձառութիւնով։ Այս չա՞տ տխուր է, Հայե՛ր։

Ո՞վ պիտի լուսաւորէ մեր ժողովուրդն հասուն դատողութիւնով և անաչառ դիտողութիւնով.

— Լրագրապե՞տը. այլ սա իւր թերթն ոչին կամ յոխին ծախած է արդէն. այսօրին գրածը վաղը հերքելն իւր սկզբունք է. նա փողոցի դռեհիկ կռիւներով իւր թերթը կը լեցնէ և երբ նիւթ չի գտնէ՝ յանկարծ այնչ առաջնորդն խծբծել, այն չնչ պան չողոքորթել կելնէ և երկար ժամանակ թէ զինքն և թէ թերթն անոր կը զոհէ... «այո՛, այս ալ տըխուր է. այլ յանցանքը ժողովուրդինն է. միթէ լրագրապետներն անապագա՞յ պիտի մեռնին՝ գրագէտների պէս, միթէ անոնցմէ շատեր ընտանիքի տէրեր չե՞ն». կ'ասեն ձեզմէ ոմանք իւրեանց սիրտի մէջ՝ զորս կը ճանչնամ և կ'ասեմ. Իրաւունք է այդ, բայց ոչ. արդարութիւնի վերայ հիմնուած բոլորովին. պէտք է ժողովուրդին տալ և ապա ուղել. պէտք է Աղեքսէնի էջերն Ազգին նուիրել և ոչ շահի, պէտք է Բանասիրաքանը բանաստեղծին առջեւ բաց լինի՝ որ իւր կրակուտ տողերով բոցավառէ ժողովուրդն. «բանաստեղծութիւնը ժողովուրդի առաջադիմութիւնին նախնական տարրը կը կազմէ». կ'ասէ Վիկտոր Իւկո։

Մեծ զարմացումով կը յիշեմ այս լրագ-

լրագրատներէն մին՝ որ ժողովուրդն առաջնորդելի և լուսաւորելի կրկնակ պաշտօնն ունի. և իւր թերթ մի ժողովրդական անունի տակ ծածկած է, որպէս սիրտն հանդերձին տակ, կ՚ասէր մինչ երեն կը տրուէր մի գրական յօդուած՝ որ շատ ներդաշնակութիւն ունէր Ազգի առաջդիմութիւնին հետ՝ (այր պատրուակով հաց կը դանէ ինք). «Ես քաղաքական պիտի գրեմ. հիմա ժամանակը չէ ատանկ յօդուածներու. երբ նիւթ չունենամ ան ատեն բերէք». որպէս թէ անկարեւոր մի բան լինէր այդ. ի՞նչ ասել է այս. կղե՛ր լինել արիւն քարոզե՛լ . . . . ժողովուրդի հացովն ապրիլ ու զանի խաբե՛լ . . : Ասի, պարոններ, ժողովուրդի միամտութիւնը ծախել է, մատնե՛լ է : Այս ֆոքը, պարոններ. մի պատանի հեղինակի սիրտ դաշունեց. որպէս կը դաշունէ քաղաքականութիւնն ազգերի սիրտ. պատանեի առաջին քայլն էր այդ՝ դողդոջ ու խրախոյսի կարօտ . . . : Այսպէս են մեր բոլոր խմբագիրներն :

ԺԴ.

Հարց կ՚անեմ կրկին, ո՞վ պիտի լուսաւորէ այս խաւարի մէջ մոլորած ժողովուրդ. ո՞վ պիտի առաջնորդէ անոր. -Հովուական դա՞սն, որ կարող է ճշմարիտ հրաշներ գործել

քանի որ պարզամիտ ժողովուրդն մի ակնածական հլութիւն կը տածէ նորա վիճակին. այլ սա՛, ա՛հ, թողէք, պարո՞ններ, մի քիչ ազատ խօսիմ, առաւել քան աշխարհիկս կըստեղծէ հոգեր չարատանջ ու անվայել իւր նուիրական պաշտօնին՝ զոր պէտք էր վարել «Յիսուսի պէս հեզութիւնով. առաքեալի պէս պարզութիւնով» մարտիրոսի պէս անձնուրացութիւնով . . . . այլ սա՛ իւր այդ սրբազան պաշտօն սեփական շահերի մի միջոց արած է. իւր կառափը տանջող միակ խորհուրդն է՝ ֆոյ. իւր երեւակայութիւնը շլացնող միակ երաշն է՝ ֆահ, ուր բարձրանալի համար չի խնայէր հաղար ճիգ, բիւր քիրտ . . . . . :

Սա, պարո՞ններ, կ՚անաթեմէ մարդկային միտի առաջդիմութիւնն՝ որ նորա պատրաստած ֆոքոֆ ղրնանէ մէջ վաթսո՛ւն դար պարաւանդուելէ վերջ՝ որպէս ծիծեռնիկ օդապար նեղ վանդակի մէջ, հաղիւ ուրեմն ազատութիւն գտնեց՝ արիւնի բիւրաւոր ղոհերով՝ անցած դարի վերջերն և տիեզեր համայն փրկանաւորեց :

Սա կը հալածէ, կը նզովէ փիլիսոփայութիւնը - ճշմարտութիւնը - անհատոտրնէ հերատապակելով զայն և կը գրգռէ կատաղի զայրոյթ միամիտ ժողովուրդին՝ որ զգացումներն երեն ի նպաստ խաղալիկ է արած . . :

Սա՛ կը տքնի ջախջախել խօսիլն և խորհե-

լի ազատութիւնն՝ եղծած ու ամբարշտութիւն ա-
նունելով զայն։

Սա հակառակ է լուսաւորութիւնի(1) զի
ժողովուրդի կուրութիւնին մէջ միայն կրնայ
իւր հարուստ էնթրիկներն դարձնել, անհա-
տական շահերն ճոխացնել, աղքատիկ ժողո-
վուրդի յետին լումայն յափշտակելով. . . . ։

Ցեսա՞ծ էք-անչո՛ւշտ- Խելք։ վարդապետ-
ներ՝ ոյք վարչական սենեակի դուռ ափ կառ-
նեն անչափ խոնարհութիւնով, անչափ հեզու-
թիւնով և հաղար հաւատարիմ խոստումնե-
րով. բայց հաղիւ թէ Վոսիորէն դուրս կելնեն
հաղիւ խեղճ Հայաստանի անոյշիկ օդը
կը ծծեն, բոլորովին գոյներնին կը փոխեն
կը մերկանան դիմակն և անյագ շահասի-
րութիւնով կիյնան գաւառներն. կերթան
աւելի կեղեքել մի արդէն շատ կեղեքուած
ժողովուրդ. ասոր տխուր փորձն ամեն օր կը

(1) Հոս նաեւ ինձ անհրաժեշտ պարտ կը համա-
րիմ անհատական ու խորին շնորհակալութիւններս
յայտնել այն խիստ սակաւաթիւ մի մաս սուրբ Հայ-
երներին՝ որք մեծ փոյթ ու խնամ ունին Ազգ. դաս-
տիարակութիւնի զարգացումին՝ ուր շարժել կ'աշ-
խատին ժողովուրդն լուսաւոր քարոզներով, սոքա
շատ անգամ, լսած եմ, իրենց քարոզի նիւթ կ'ա-
նեն դասդիարակութիւն. ի՞նչ քաղցր բան, քարոզել
Աստուած եւ լոյս. եւ խրատել բարեպաշտ ժողո-
վուրդին՝ առաջել դէպ գիտութիւն։ Ապրին այս
ճշմարիտ կղերներն «Աստուածային քահանայներ»։

կատարուի մանրամասնութիւնի հարկ չիկայ.
ասի անխիղճութիւն է, ասի բարբարոսու-
թիւն է . . . ։ Կամ թէ՝ հաղիւ ոտքերնին մի
քաղաքի դուռէն ներս կը դնեն՝ ահա «Կոչ-
ենք ենք ոչեր» ի անիծած խնդիրն կը բրդի.
աղմուկ, խռովութիւն, կաղ, կռիւ շատ ան-
գամ արիւն կը ճարակին. եղբայր եղբայրին
դէմ կը գինուի, վարժարանները կը գոցուին.
այլ ա՛ւ՝ խաղաղութիւնի և ներողութիւնի
պաշտօնեայն՝ փոխանակ ոտի փոշին թոթա-
փելի՝ ա՛լ ամուր կը տեղաւորուի, կը յամա-
ռի, թողուլով խեղճ քաղաքացիներն աղէտա-
ւոր ալէկոծութիւնի մէջ . . . ։

Եւ սա՞ պիտի աշխատի ճառագայթել
լուսաւորութիւն. ա՞ւ որ իւր պատճառով
գոցուած վարժարանների աղէկաւոր վիճա-
կի վերայ ցուրտ անտարբերութիւնով կը նա-
յի՝ որպէս վայրագ սպանող իւր զոհի վերայ...։
Դպրոց փակելն՝ ապագան անճիտել է. և այս
սասա՛կ ոճիր. անհնարի՛ն եղե՛ռն . . . ։

Աւա՛ղ, ոա պարտ էր իւր ուխտի մէջ հա-
ւատարիմ մնալ. պարտ էր մի Շահնազար-
եան ոգիով գործել . . . ։

Շահնազա՛ր, Շահնազա՛ր. Միսիթարէ վերջ
օրհնա՛ծ անուն, նուիրական յիշատա՛կ . . .
Բայց, բաբէ՛, խիստ կանո՛ւխ քանդուեցաւ
այս հոյակապ Մարդի սրբազան Տաճար. դեռ
առնուազն կէս դար պէտք էր նա աղգին.

կանո՛ւմ չա՛տ կանուխ եղծուեցաւ նորա կը-
րակն. արցունքով կը յիշեմ՝ փակուած է Շահ-
նազարեան վարժարան . . . :

Այս կղերներէն շատեր, ասեմ խօսիս
դառնալով, բոլորովին անտեղեակ են իւր-
եանց պաշտօնի և գոյութիւնին. ասոնց հա-
մար կեանքն մի ստուերի պէս կ՚գայ մի երա-
ղի պէս կ՚անցնի. և կը հաւատացնեն թէպէտ է.
կեանքը փուշերով լի լինի . . . ո՛վ սոսկալի կու-
րութիւն . . . իւրեանց կեանքն արդէն մի
մեքենական գործողութիւն է մի իտէական
մեքենաւարի ափին մէջ. գաղափարնին սաս-
տիկ մշուշով պատուած է. հաստատ ընթերցո-
ղութիւն անգամ չեն գիտեր :

Հայաստան ասանկներով լի է . . . :

ԺԵ.

Ա՛րդ ո՞վ պիտի լուսաւորէ այս խեղճ ժո-
ղովուրդն՝ որ իւր բոլոր էութիւն վերացա-
կանութիւնների հետ սերտիւ կապուած կը
հաւատայ. հաշմ, թմրած մի վիճակի մէջ
կ՚ապրի – եթէ ներելի է ապրիլ ասել – ամեն
ինչ բախտին ու Աստուածին կը վերադրէ, ա-
մենէն սաստիկ ոճիրներն իսկ :

Այս ժողովուրդի միտ կանխակալ կար-
ծիքների մէջ կը ծփայ, թշուառ է. և ո՞վ
պիտի փրկէ, ո՞վ պիտի լուսաւորէ զանի :

— ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆը միայն, այս է
իմ հաստատ հաւատ, Նա և եթ նախասահ-
մանուած է գործել ազգային վերածնումի
փափուկ ու հսկայ գործ. առաջ վարել լու-
սաւորութիւնը կուսակցական ոգիէ աղատ,
սեփական շահերէ անկախ :

Նա պիտի լեցնէ այն պակաս՝ զոր կղերը
առաջնորդն և լրագրապետը կը բռնան ա-
մեն օր :

Նա պիտի ԳՈՐԾԷ՝ այս է իմ ներքին հա-
մոզում, ինչ որ ԱՐԴԱՐ, ԲԱՐԻ և ԺՈՂՈՎՈՒՐ-
ԴԻՆ ՕԳՏԱԿԱՐ է :

Եւ Նա արդէն սկսած է գործել. չէ՞ք
տեսներ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆն, վար-
ժարաններ կը բանայ Հայաստանի մէջ. փո-
ղոցները թափառող մանուկներն կը հաւաքէ
մի սուրբ յարկի տակ՝ որպէս հաւ իւր ձա-
գերն խնամոտ թեւերին տակ, գիրք կը տայ
անոնց. լոյս կ՚տայ և Ազգին և Մարդկու-
թիւնին համար նոր մարդեր կը յարուցանէ
բարձրացնելով այն հանճարներն՝ որք պիտի
կորսուէին անշուշտ մութին մէջ, ոչընչու-
թիւնի մէջ : Մի հանճար սնուցանել մի հան-
ճար յարուցանել, մի աշխարհ լուսաւորել
ասել է :

ԳՈՐԾԱՒՈՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆը կաշխատի
անդուլ իւր գործարանը բացող միջոցներին
որով արուեստներին մեծ դիւրութիւն պիտի

ընծայէ՝ առաջել դէպ կատարելութիւն։

Եւ սա ՀԱՅ-ԳՐԱԿԱՆԸ՝ որ իւր խորհրդաւոր գրոչակի տակ խմբուած է հոտ, որ դեռ երէկ սկսաւ, վաղն արդէն բաւական մեծ քայլեր առած պիտի լինի իւր վերամնպատակի մէջ, որ անչափ փարձ է՝ որչափ ինք այսօր փոքր. սա գրականութիւնը պիտի ծաղկեցնէ, մեծ փոյթ պիտի տանի հանճարներու աճումին և առաջացումին։

Գրականութիւն, Պարոններ, արեւէն աւելի օգտակար է տիեզերին։

Նա ինքն է լոյս՝ որով ողողուեցան շատ ազգեր՝ ոյք երէկ վայրի էին ու բարբարոս, և այսօր երջանիկ են նաբա և կատարեալ։

Հաղարաւոր ակներու փորձեր ամեն օր կապացուցանեն մեզ թէ՝ գե՛րի, թշուա՛ռ և աղքա՛տ է այն ժողովուրդ, որ աղքատ է գրականութիւնով։

Հայ-Գրական խումբը մի ծանր պարտ կրստանձնէ. գրականութիւնը անեղը է. ես չեմ երկուանար թէ նա պիտի դողդոջէ. իմ յոյսը մեծ է իւր վերայ. զի ինք երիտասարդ է, եռանդ ունի, աչխոյժ ունի, սիրտ ունի, հոգի ունի, և իւր առջև մի աղքատիկ ժողովուրդ՝ ոյր աղէտներուն ատեն ծնաւ, ոյր արցունքով սնաւ ինք. . ։

Նա պիտի ԳՈՐԾԷ. այս է իմ հաւատ. նա լոյս պիտի տայ. լո՛յս՝ վանքին, լո՛յս՝ աւերակին, լո՛յս փլատակին, լո՛յս մանուկին, լո՛յս ծերին. . ։

Եւ ո՞ր մէկ ընկերութիւնն յիշեմ, որք ամեն օր կը կազմուին զանազան նպատակներով և կը գործեն անձանձիր. մին բեռնակիր կը դաստիարակէ, մին լսարանով խուժանը կը կրթէ, մին «ա» և «բ» կը քարոզէ մի ուրիշն Աստուած և Հայրենիք։ Ես կը տեսնեմ զասոնք և կը հրճուիմ։ Քանի՞ քաղցրը է և զօրաւոր միութիւնն՝ որով և եթ կարելի է իրականացնել ճշմարիտ հրաշներ։

ԻԶ.

Իսկ ժողովուրդին կը մնայ՝ ինչպէս կ'ասէի. կազմել շահարար ընկերութիւններ, կազմել՝ մանաւանդ Հայաստանի մէջ, առաջ տանիլ երկրագործութիւնն՝ որ ամեն արհեստէ աւելի արդիւնաւէտ, անխարդախ և անդորրական է։

Վստահ եղի՛ք, հայաստանցիներ, այն ատեն ոչ ոք պիտի ինասէ ձեզ ոչ ոք պիտի յափշտակէ ձեր ինչը, ձեր գոյքն և ձեր վաստակ, զի զօրաւոր պիտի լինիք միանալով, ձեռք ձեռքի տալով. այն ատեն օտար երկիր չի պիտի վազէք. պանդուխտ չի պիտի լինիք. ձեր արձունք, ձեր քիրտ ապառաժների վերայ չի պիտի թափեն անարգասիք։

Կազմեցէ՛ք այս տեսակ ընկերութիւններ՝ որով պիտի կարողանայք բարգաւաճել ձեր անհնակ դաշտերն ծաղկեցնելով շերամ, բամպակ, ցորեն ևն են։ Կազմեցէ՛ք վաճառականական միութիւններ, ձեր երկիրին բերքերը օտար երկիր, և օտարին ոսկին ձեր քսակ փոխադրելով։ Ասիայի մէջ վաճառականութիւնն շատ ետք է, կրնաք դիւրութիւնով գործել. այն ատեն հարուստ պիտի լինիք։

Կազմեցէք միութիւններ, այն ատեն երջանիկ պիտի լինիք. այս է իմ կարծիք։

Միութիւն, ինչպէս կասէի, հեղինակ, ոյժ և զօրութիւն է։

ԺԷ.

Շատ երկարեցաւ իմ խօս. ձանձրացուցի զձեզ, ներուին կը խնդրեմ. ա՜հ. տարին միանգամ և եթ պատեհութիւն կունենամ այսչափ հաղարաւոր Հայեր խմբուած տեսնել մի ամպիոնի շուրջ անոր համար երկարեցի։

Սիրոս ցաւած է, հոգիս կարեվէր, և այն մեծ խոց՝ որով կը ծիւրէի, այն դժնդակ պանդխտութիւն՝ որ զիս կը սարսափեցնէր, փափաքեցայ յայտնել ձեզ. ձե՛զ, որք իմ քաղցր ուրթշուառ եղբայրներն են. ձե՛զ. որ ինքնին կը կազմէք Հայութիւնը։

Իցի՛ թէ հոգն առնէր տաներ ձայնս և արցունք՝ ուր որ Հայ կայ, ուր որ պանդուխտ կայ . . . ։

ԺԸ.

Ահա կը կտրեմ իմ ձայն՝ վստահ լինելով թէ նա դէթ մի տկար արձագանք գտաւ ձեր սիրտերին մէջ։

Մի արցունք խաղաց ձեր աչերին մէջ այն արտասրալից վիճակի համար՝ ուր դուք կը տառապիք և իմ սիրտ կը բերի . . . ։ Օ՜հ, մնաք բարով, իմ եղբայրներ. մի մոռնաք միութիւններ կազմել. ձեր խաղաղ ու երջանիկ ապագան կազմել է այդ. ասով պիտի փրկուի մեր սգաւոր հայրենիք. ասով պիտի լինիմք և մեք՝ ինչ որ եղած են ուրիշ առաջադէմ ազգեր, -կարող, հարուստ և երջանիկ։

Եւ դուք, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵ՛Ր, գործեցէ՛ք անվհատ. ձեր պարտ կարի մեծ է, զոր կը ճանչնաք խիստ աղէկ։ Ապագային կորուստ կամ փրկութիւն ձեզմէ կախուն ունի. նորա երկիւղած աչեր վերայ կը յառին յուսալից. զի դուք նորա ծնող պիտի լինիք։

Ձեր գործը, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, փափուկ է յոյժ. մի ինկած հայրենիքի յոյսեր Ձեր վրայ կը կեդրոնանան. իւր աղէտներն ան-

թիւ են, թերութիւններն բիւրաւոր՝ զորս իմ շուրթերէն չա՛տ ազգու և կանուխ պարզեցին Ձեր առջեւ պերճախօս լեզուով ձեր սիրտ և Ձեր հոգի զգայուն։

Դուք քաջ գիտէ՛ք ինչ որ պէտք է գործել այս Ազգի փրկութիւնին համար. նորա ժիր ու գործօն զաւակներն դուք էք միայն։ Ուրեմն առա՛ջ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, մի թողուք, շարունակեցէք այդ ուղին, դէպ անմահութիւն կը տանի այն . . . ։

Ու երբ ձեր այդ փառաւոր շաւղին մօտեր, ո՛ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, ո՞ իմ հայրենիքին քաղցրիկ ՁԱՒԿՆԵՐ, ձեր անմտադիր աչերին հանդիպի մի աննշան հողակոյտ, ա՛հ եղբայրներս, դէթ դուք յիշեցէ՛ք, մի մոռնաք, ձեր յետին ընկերին է նա. և յիշեցէք Ձեր սիրտերի մէջ

Անբա՛խտ ՍԻՍԱԿ

1877 Մայիս 29

6699

ԱԶԴ

Սոյն ԽՕՍ ի մէջ ինչ ինչ պատճառներով տպագրական փորձն աղէկ չէ նայուած՝ որը համար աղնիւ ընթերցողի ներողութիւնն կը խնդրեմ։

Ս.

P. U.
№ 6699